## ՀՀ Սյունիքի մարզի Քարուտի (նախկին Քիրս-Քյուրուտի) ավազակոպճային խառնուրդի հանքավայրի համառոտ նկարագիրը

Քարուտի (նախկին Քիրս-Քյուրուտի) ավազակոպճային խառնուրդի հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Գեղի բնակավայրի վարչական սահմաններում, Քարուտ գյուղից 3 կմ հարավ-արևելք և տեղադրված է Կահուրդ գետի ստորին հոսանքում, 1735–1750 մ բացարձակ բարձրությունների վրա: Զբաղեցնում է 2.41 հա մակերեսով տարածք: Մոտակա բնակավայրերից են Գեղի (3.5 կմ) և Նոր Աստղաբերդ գյուղերը (3.7 կմ): Հանրապետական նշանակություն ունեցող Երևան-Կապան-Քաջարան-Մեղրի ավտոխճուղին անցնում է հանքավայրից մոտ 13 կմ հարավ-արևելք: Քարուտի (նախկին Քիրս-Քյուրուտի) ավազակոպճային խառնուրդի հանքավայրը հետախուզվել է 2007-2008թթ.: Իրականացված հետախուզման տվյալներով կազմվել է երկրաբանական հաշվետվություն, որի պետական ընդերքաբանական փորձաքննության արդյունքում հաստատվել են դրանց պաշարները: Պաշարների հաստատումից հետո հանքավայրում իրականացվել և մինչ այժմ իրականացվում են շահագործական աշխատանքներ: 2023-2025թթ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանքավայրում իրականացվել է լրահետախուզում և պաշարների վերագնահատում:

Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

- հյուսիսային լայնություն -39°15'1'',
- արևելյան երկայնություն -46°8'22'':

Ստորև բերվում են հայցվող տարածքի եզրագծի ծայրակետերի կոորդինատները՝ ըստ ARM WGS-84 կոորդինատային համակարգի.

Հաշվարկված պաշարի եզրագծի ծայրակետերի կոորդինատները

| Կետերի համարները | X | Y | Կետերի համարները | X | Y |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | 4347111.8272 | 8598123.0261 | 22 | 4346819.1060 | 8598407.1981 |
| 2 | 4347127.5866 | 8598127.6296 | 23 | 4346851.5969 | 8598416.3498 |
| 3 | 4347122.3582 | 8598151.9314 | 24 | 4346869.0994 | 8598412.9559 |
| 4 | 4347110.0850 | 8598194.7616 | 25 | 4346886.3250 | 8598413.9644 |
| 5 | 4347099.1361 | 8598206.3029 | 26 | 4346903.3671 | 8598402.7270 |
| 6 | 4347092.2366 | 8598216.1183 | 27 | 4346914.6839 | 8598398.6362 |
| 7 | 4347070.5589 | 8598243.4558 | 28 | 4346932.1483 | 8598383.8218 |
| 8 | 4347043.1090 | 8598295.5001 | 29 | 4346955.5235 | 8598359.3286 |
| 9 | 4347045.9723 | 8598305.4647 | 30 | 4346982.9205 | 8598330.8090 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| 10 | 4347040.4641 | 8598330.2587 | 31 | 4346997.6748 | 8598309.5878 |
| 11 | 4347017.0194 | 8598373.0328 | 32 | 4347006.6018 | 8598290.0619 |
| 12 | 4346988.4120 | 8598382.9548 | 33 | 4347034.5615 | 8598231.0509 |
| 13 | 4346965.6259 | 8598402.7638 | 34 | 4347056.5292 | 8598208.7368 |
| 14 | 4346953.6292 | 8598414.0538 | 35 | 4347060.7812 | 8598187.3251 |
| 15 | 4346906.3112 | 8598443.6336 | 36 | 4347073.6307 | 8598160.3054 |
| 16 | 4346872.1535 | 8598457.6169 | 37 | 4347089.3464 | 8598149.9775 |
| 17 | 4346845.3780 | 8598464.3500 | 38 | 4347088.7376 | 8598131.9205 |
| 18 | 4346806.4123 | 8598482.7301 | 39 | 4347092.8963 | 8598128.7180 |
| 19 | 4346784.9504 | 8598500.6050 | 40 | 4347104.8517 | 8598129.4649 |
| 20 | 4346720.8093 | 8598459.8237 | 41 | 4347110.6076 | 8598126.7335 |
| 21 | 4346780.2188 | 8598420.6540 | | | |

Նախագծի իրացման արդյունավետությունը կասկած չի հարուցում, քանի որ ՀՀ Սյունիքի մարզի Քարուտի (նախկին Քիրս-Քյուրուտի) ավազակոպճային խառնուրդի հանքավայրն արդեն երկար տարիներ արդյունավետ շահագործվում է և դրա օգտակար հանածոյի մնացորդային պաշարների արդյունահանում կազմակերպելու դեպքում կշարունակվեն ինչպես ընդերքօգտագործող ընկերության՝ «Թունել» ՓԲԸ-ի, շահութաբեր աշխատանքը, այնպես էլ մուտքերը պետական և համայնքային բյուջե՝ հարկային ու այլ տեսակի (բնօգտագործման վճար, տարբեր տեսակի պետական տուրքեր, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում նախատեսվող տարեկան պարտավո-րությունների) վճարների տեսքով:

Քարուտի ԱԿԽ-ի հանքավայրում 01.05.2024թ. դրությամբ հաշվարկված ստատիկ պաշարները կազմում են 236.7 հազ. մ$^3$, կորզվող պաշարները՝ 200.5 հազ մ$^3$, օգտակար հանածոյի կորուստները բացահանքի կողերում և հատակում՝ 16% է, մակաբացման ապարների ծավալը՝ 7245.7 մ$^3$, մակաբացման միջին գործակիցը՝ 0.036 մ$^3$/մ$^3$:

Քարուտի ԱԿԽ-ի հանքավայրի պաշարները վերականգնվող են, վերականգնման գործակիցը ընդունվում է մեկ միավոր: Հաշվի առնելով տարեկան ցիկլում 1 միավոր վերականգնման գործակիցը, հանքավայրի ընդհանուր վերականգնվող պաշարները կկազմեն 236.7 հազ.մ$^3$:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է 25 հազ. մ$^3$, ծառայ-ման ժամկետը՝ 8.02 տարի: Տարեկան մարվող պաշարների քանակը 29 հազ. մ$^3$ է:

Բացահանքում տեխնիկական ջրի պահանջարկ առաջանալու է արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշենստեցման համար՝ ճանապարհների ջրցանման

նպատակով: Տեխնիկական ջրի մատակարարումը նախատեսվում է կազմակերպել ջրցան-լվացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումն իրականացվում է և նախատեսվում է իրականացնել պայմանագրային հիմունքներով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից:

Բացահանքում բոլոր լեռնային աշխատանքները պետք է կատարվեն բաց եղանակով մշակվող հանքավայրերի գործող անվտանգության միասնական կանոններին (ԱՄԿ) և շահագործման տեխնիկական կանոններին (ՇՏԿ) խստիվ պահպանմամբ:

Նախագծի իրականացումից առաջացող սոցիալական ազդեցության գնահատմամբ պարզվել է, որ տեղամասի շահագործման կամ փակման արդյունքում բնակչության տարհանման խնդիր չի առաջանա: Նախատեսվում է բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել մոտակա համայնքների բնակչությանը, ինչպես նաև սոցիալական խնդիրների համար ընդհանուր առմամբ տրամադրել տարեկան 500.0 հազ. դրամ գումար: